Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 15 -ի N 409 - Ն որոշման

« Հավելված N 3
ՀՀ կառավարության 2004 թվականի
դեկտեմբերի 23 -ի N 1854 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ (ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ) ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ (ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ) «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱ-ՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Ներդրումային ծրագիրը «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում Հայաստանի Հանրապետության մարզերում (համայնքներում) և Երևան քաղաքում (վարչական շրջաններում) իրականացվող ներդրումային ծրագրերի համար համայնքի կողմից կատարվող համաֆինանսավորումն է, որն ուղղվում է աշխատանք փնտրող անձանց կողմից իրականացվող օժանդակ աշխատանքների վարձատրությանը:

2. Համայնքի ղեկավարը, Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարը (այսուհետ՝ պատվիրատու) յուրաքանչյուր տարվա մինչև հուլիսի 20-ը, իսկ տվյալ տարվա ընթացքում նոր ներդրումային ծրագրերի ի հայտ գալու դեպքում՝ հաստատվելուց հետո 7-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության մարզպետին, Երևանի քաղաքապետին է ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում իրականացվելիք ծրագրերի հայտ-առաջարկը, որտեղ նշվում են ծրագրի անվանումը, դրա իրականացման համար անհրաժեշտ նախնական մասնագիտական պատրաստվածություն չպահանջող աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ մարդ/օրերի թիվը, ծրագրի տևողությունը, ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների և ներդրումների չափը:

3. Հայաստանի Հանրապետության մարզպետարանը, Երևանի քաղաքապետարանն ամփոփում է համայնքներից, Երևան քաղաքի վարչական շրջաններից ստացված հայտ-առաջարկները և արդյունքները մինչև հուլիսի 30-ը, իսկ տվյալ տարվա ընթացքում նոր ներդրումային ծրագրերի ի հայտ գալու դեպքում՝ ստանալուց հետո 7-օրյա ժամկետում, ներկայացնում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)։

4. Նախարարությունը ծրագրերի գծով հաստատված ներդրումների չափով, պետական բյուջեի եռամյակային համամասնություններով նախատեսված չափաքանակների սահման-ներում միջոցները համայնքների, Երևան քաղաքի բյուջեների եկամտային հաշվին է փոխանցում Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N 1854 -Ն որոշման N 1 հավելվածով սահմանված գործընթացին համապատասխան։

5. Պատվիրատուն տվյալ ծրագրի համար հաստատված ներդրման համար պետական բյուջեից ստացված միջոցները ծրագիրն իրականացնող կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն) է փոխանցում վերջինիս հետ սահմանված կարգով պայմանագիր կնքելու միջոցով, որում նշվում է փոխանցվող միջոցների չափը, նպատակը։

Պայմանագրում առաջնահերթության կարգով նշվում է կազմակերպության կողմից տվյալ ծրագրով նախատեսված նախնական մասնագիտական պատրաստվածություն չպահանջող աշխատանքների գծով նախատեսված մարդ/օրերի թիվը՝ տարածքային կենտրոններում հաշվառված, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N 1854 -Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետում նշված անձանց ծրագրի իրականացման գործընթացում ընդգրկելու պայմանը։

Տարածքային կենտրոնը և կազմակերպությունը համատեղ քննարկման արդյունքում կազմում են ծրագրում ընդգրկվող աշխատանք փնտրողների ցուցակը։

Պատվիրատուն նշանակում է ծրագրի պատասխանատու։

6. Յուրաքանչյուր ծրագրի իրականացման աշխատանքներում ընդգրկված աշխատանք փնտրողների աշխատավարձը և դրա նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկում և վճարում է կազմակերպությունը:

7. Կազմակերպությունը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 օրվա ընթացքում պատվիրատուին է ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում ծախսված ներդրման միջոցների և ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աշխատանք փնտրողի փաստացի աշխատած մարդ /օրերի աճողական չափը:

Պատվիրատուն մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը նախորդ ամսվա ընթացքում ծախսված ներդրման միջոցների չափի և ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աշխատանք փնտրողի փաստացի աշխատած մարդ/օրերի վերաբերյալ աճողական տեղեկատվությունը կազմակերպությունից ստանալուց հետո ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետին (Երևանի քաղաքապետին):

Հայաստանի Հանրապետության մարզպետը, Երևանի քաղաքապետը մինչև յուրաքանչյուր ամսվա 12-ը ամփոփում ու նախարարություն են ներկայացնում ըստ համայնքների, Երևանի վարչական շրջանների և ըստ ծրագրերի նախորդ ամսվա ընթացքում ծախսված ներդրման միջոցների չափի և ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աշխատանք փնտրողի փաստացի աշխատած մարդ/օրերի վերաբերյալ աճողական տեղեկատվությունը:

8. Կազմակերպությունը ծրագրի ավարտից հետո եռօրյա ժամկետում տեղեկացնում է պատվիրատուին: Պատվիրատուն եռօրյա ժամկետում ծրագրի ավարտը հավաստող փաստաթղթերի պատճենները ներկայացնում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության մարզպետին, Երևանի քաղաքապետին և տարածքային կենտրոնին:

Հայաստանի Հանրապետության մարզպետը, Երևանի քաղաքապետը 5-օրյա ժամկետում ամփոփում և նախարարություն են ներկայացնում ծրագրի ավարտը հավաստող փաստաթղթերը:

9. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումն անհնարին դարձնող հանգամանքների ի հայտ գալու դեպքում կազմակերպությունը ծրագրի իրականացման

ժամկետների կամ իրականացվելիք աշխատանքների ծավալների փոփոխության կամ ժամկետից շուտ դադարեցման անհրաժեշտության վերաբերյալ գրավոր տեղեկացնում է պատվիրատուին, որը համապատասխան եզրակացությամբ եռօրյա ժամկետում այն ներկայացնում է մարզպետին, Երևանի քաղաքապետին, վերջինս 5-օրյա ժամկետում տեղեկատվությունը ներկայացնում է նախարարություն։

10. Ծրագրի վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N 1854 -Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 13-րդ, 22-րդ, 23.1-ին, 24-րդ, 25-րդ, 25.1-ին, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 32-րդ, 34-րդ, 35-րդ կետերի դրույթները։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 15 -ի N 409 - Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2004 թվականի
դեկտեմբերի 23 -ի N 1854 - Ն որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ (ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ) ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ (ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ) ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ, ԾԱԽՍՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

____ _____ 200 թ. քաղ. _____

Համայնքի ղեկավարը, Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարը (այսուհետ՝ պատվիրատու) _____, մի կողմից, և _____
(անունը, ազգանունը) (անվանումը)
ծրագրի համար հաստատված ներդրման համար պետական բյուջեից ստացված միջոց-ները ծրագիրն իրականացնող կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) _____ , մյուս կողմից (այսուհետ՝ կողմեր), Հայաստանի
(անունը, ազգանունը)
Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N 1854-Ն որոշման հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1._____ պատվիրատուի կողմից հաստատված և _____ կազմա-կերպության կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության մարզերում

(համայնքներում) և Երևան քաղաքում (վարչական շրջաններում) իրականացվելիք ներդրումային ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) համաֆինանսավորման իրականացման հետ կապված ծախսերի նախահաշվով նախատեսված ֆինանսական միջոցները _____ կազմակերպության կողմից ստանալու, ծախսելու և փաստացի կատարված վճարումների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու հետ կապված հարաբերությունների կարգավորումն է:

II. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2.1. Պատվիրատուն պարտավորվում է՝

2.1.2. _____ ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում իր կողմից հաստատված նախահաշվով նախատեսված ֆինանսական միջոցներն ստանալու համար իրեն սպասարկող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության տեղական գանձապետական բաժնում (այսուհետ՝ ՏԳԲ) բացել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի արտաբյուջետային միջոցների հաշիվներ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում.

բ) ավագանու որոշում տեղական ինքնակառավարման մարմնի արտաբյուջետային միջոցների հաշվում՝ սույն ծրագրի շրջանակներում համայնքին հատկացված ֆինանսական միջոցների չափով փոփոխություններ կատարելու մասին.

գ) ծախսային նախահաշիվ՝ հաստատված համայնքի (Երևան քաղաքի վարչական շրջանի) ղեկավարի կողմից.

2.1.3. իրեն սպասարկող ՏԳԲ-ում իր անվամբ բացված արտաբյուջետային միջոցների հաշվից համապատասխան գումար ստանում և իր ծախսային հաշվին է մուտքագրում Հայաս-

տանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահման-ներում՝ ներկայացնելով վճարումը հիմնավորող փաստաթղթեր (հավաստագիր, հայտ և այլն).

2.1.4. ամփոփել կազմակերպություններից ստացված ֆինանսական հաշվետվությունը (աճողական) և մինչև տվյալ ամսվա 10-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության մարզպետարան, Երևան քաղաքապետարան։

2.2. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.2.1. առաջնահերթության կարգով կազմակերպության կողմից տվյալ ծրագրով նախատեսված նախնական մասնագիտական պատրաստվածություն չպահանջող աշխատանք-ներում ընդգրկել տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողներին.

2.2.2. հաշվարկել և վճարել ծրագրում ընդգրկված աշխատանք փնտրող անձանց աշխատավարձը.

2.2.3. ծրագրի իրականացման ընթացքում յուրաքանչյուր ամսվա համար փաստացի կատարված վճարումների մասին մինչև հաջորդ ամսվա 5-ը ֆինանսական հաշվետվություն (աճողական) ներկայացնել _____ պատվիրատուին։
(անվանումը)

2.3. Ծրագրի կատարման ընթացքի նկատմամբ մոնիթորինգ և վերահսկողություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ լիազորված մարմինները։

2.4. Սույն պայմանագրով կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրա-պետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

Կողմերի գտնվելու վայրը՝

_____	_____
(կազմակերպության անվանումը, հասցեն)	(կազմակերպության անվանումը, հասցեն)
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ	ՀԱՄԱՅՆՔԻ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

----------	----------
(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)
Կ.Տ.	Կ.Տ.»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ